ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**N 134**

**« 25 » « 12 » 2017թ.**

☎ (0-255) 6-00-58

Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Կրկին Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ավագու թիվ 23-Ա, 24-Ա, 25-Ա, 26-Ն, 27-Ն, 28-Ն, 29-Ա, որոշումները :

Առդիր՝ 16 թերթ :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

25.12.2017թ. գ.Սարամեջ — Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2017 թվականի N 23-Ն

## ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

2017թ-ի Սարամեջ համայնքի բյուջեում կատարելու հետևյալ փոփոխությունները.

1) 01,01,01,51 տնտ դասակարգման 4823 հոդվածից 183,0/մեկ հարյուր ութսուներոք հազար/ դրամ տեղափոխել 04,06,01 տնտ.դասակարգման 4269 հոդվածին.

2) 10.07,01,54 տնտ. Դասակարգման 4729 հոդվածից 335,0 /երեք հարյուր երեսունհինգ/հազար դրամ տեղափոխել 09,02,02 տնտ դասակարգման 4269 հոդվածին,

3) 10,03,01,55 Տնտ դասակարգման 4729 հոդվածից100,0/մեկ հարյուր հազար դրամ տեղափոխել 04,06,01,51 տնտ դասակարգման 4264 հոդվածին.

4) 01,03,03,55 տնտ դասակարգման 4234 հոդվածից 50,0/հիսուն հազար դրամ տեղափոխել 04,06,01,51 տնտ.դասակարգման4264 հոդվածին,

5) 04,02,04 տնտ.դասակարգման 4639 հոդվածից 350,0/երեք հարյուր հիսուն հազար/դրամ տեղափոխել 04,06,01,51 տնտ դասակարգման 4264 հոդվածին,

6) 11.02,01,51 տնտ դասակարգման 4891 հոդվածից 70,0/յոթանասուն հազար դրամ տեղափոխել 01,01,01,51 տնտ.դասակարգման 4264 հոդվածին,

7) 08,02,04,51 տնտ դասակարգման 4819 հոդվածից 15,0/տասնըհինգ հազար դրամ/ տեղափոխել 06.04.01 տնտ դասակարգման 4269 հոդվածին,

8) 05,01,01,51 տնտ դասակարգնշման 4239 հոդվածից 150,0/մեկ հարյուր հիսուն հազար/դրամ տեղափոխել 06,04,01 տնտ դասակարգման 4269 հոդվածին.

9) 04,05,01.59 տնտ դասակարգման4251 հոդվածից 10,0/տասը հազար դրամ/ տեղափոխել 01,01,01,51 տնտ դասակարգման 4269 հոդվածին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ԿՈՂՄ՝ (6) ԴԵՄ՝ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
3.ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
4.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
5.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
6.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (15.12.2017թ.) Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» դեկտեմբերի 2017 թվական, 24- Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարամեջ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարամեջ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ՝ (6) ԴԵՄ՝ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
3.ՔՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
4.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
5.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
6.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
գ .Սարամեջ (15. 12.2017թ.) Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 15-ի N 24-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Ավագյան Հրահատ Համեստի – 45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
2. Պողոսյան Վենետիկ Գեղամի - 45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
3. Դարչինյան Լալա Խաչիկի – 45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
4. Զաքարյան Նռնյակ Սամսոնի – 45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
5. Հովհաննիսյան Հմայակ Գրիշի - 45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
6.Ֆարմանյան Դուսյա Արմենակի – 45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
7.Հովհաննիսյան Գևորգ Վազգենի -45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
8.Հովհաննիսյան Վիլիկ Լևոնի – 45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
9.Պողոսյան Արայիկ Ալբերտի – 45000 քառասուն հինգ հազար դրամ (սոց. օգնություն)
10.Սահակյան Մահամ Միերի – 50000 հիսուն հազար դրամ (ուսման վարձ)
11. Հովհաննիսյան Աղասի Աշոտի – 50000 հիսուն հազար դրամ (ուսման վարձ)
12. Խաչատրյան Սերինե Շալիկոյի – 50000 հիսուն հազար դրամ (ուսման վարձ)

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հեռ.0255-6-00-58 էլ.փոստ saramej.lori@mta.gov.am
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2017 թվականի N 25 –Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Սարամեջ համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ԿՈՂՄ՝(6 ) ԴԵՄ՝(0) ՁԵՌՆՊԱՀ՝(0)

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
3.ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
4.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
5.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
6.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ .Սարամեջ (15.12.2017թ.) Կ.Տ

Հավելված
Լոռու մարզի Սարամեջ համայնքի
ավագանու 2017թ.
դեկտեմբերի 15-ի թիվ 25-Ա
որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը` 13

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը ամսական |
|---|---|---|---|---|
| Քաղաքական և հայեցողական պաշտոններ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 300000 | 300 000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 175000 | 175 000 |
| | **Ընդամենը** | **2** | **475000** | **475 000** |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 175000 | 175000 |
| 2 | Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 170000 | 170000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 170000 | 170000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 95000 | 190000 |
| 5 | Երկրորդ կարգի մասնագետ | 2 | 85000 | 170000 |
| 6 | **Ընդամենը** | **7** | **695000** | 875000 |
| Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ | | | | |
| 1 | Հավաքարար | 1 | 82000 | 82000 |
| 2 | Վարորդ | 1 | 85000 | 85000 |
| 3 | Պահակ | 1 | 82000 | 82000 |
| 4 | Տեխնիկական աշխատող | 1 | 82000 | 82000 |
| | **Ընդամենը** | **4** | **331000** | **331000** |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **13** | | **1 681 000** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ հասցե saramej.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» դեկտեմբերի 2017 թ. N 26 -Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Սարամեջ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարամեջ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ՝(6 ) | ԴԵՄ՝(0) | ՁԵՌՆՊԱՀ՝(0) |
|---|---|---|---|
| 1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ | | | |
| 2.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ | | | |
| 3.ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ | | | |
| 4.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ | | | |
| 5.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 6.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ ( 15.12.2017թ.) Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 26 -Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

1) Հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար

15000 ( տասնհինգ հազար ) դրամ:

2) սույն կետի «1-ին» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 (երեսուն հազար) դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ,

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ:

3) Ոչ հիմնական օբյեկտների համար

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 (երեք հազար ) դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 (հինգ հազար) դրամ:

1. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող շենքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 3000 (երեք հազար) դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերանորոգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1-ին» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության

փոփոխություն, ապա սույն որոշման իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 ( հինգ հազար ) դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500(հազար հինգ հարյուր դրամ),

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի վաճառքի կազմակերպման դեպքում 3000 (երեք հազար դրամ),

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4000(չորս հազար դրամ),

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 (տասը հազար դրամ),

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 27000(քսանյոթ հազար դրամ),

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 29000(քսանինը հազար դրամ),

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2000(երեք հազար դրամ)

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմանական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 3000 (երեք հազար դրամ)

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4000 (չորս հազար դրամ)

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 (տասը հազար դրամ)

ե/ 201-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի վաճառքի կազմակերպման դեպքում 30000(երեսուն հազար դրամ)

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 40000 (քառասուն հազար դրամ)

4. Համայնքի տարածքում

1) բացօթյա վաճառք կազմակերպելու համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 (երեք հարյուր հիսուն ) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար,

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200000 (երկու հարյուր հազար) դրամ,

3) Խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000(երեսուն հազար դրամ)

5. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է `

1) Հիմնական շինությունների ներսում

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000(երեք հազար դրամ)

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 (հինգ հազար դրամ)

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000(յոթ հազար դրամ)

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 (տաս հազար դրամ)

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000(երեսուն հազար դրամ)

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 (հիսուն հազար դրամ)

3) Ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 (մեկ հազար դրամ)

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 (երկու հազար դրամ)

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000(չորս հազար դրամ)

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 (ութ հազար դրամ)

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000 (տասնհինգ հազար դրամ)

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25000 (քսանհինգ հազար դրամ)

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճալիքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար 25000 (քսանհինգ հազար ) դրամ,
2) հանրային սննդի և զվարճալիքների օբյեկտների համար 50000 (հիսուն հազար )դրամ,
3) բաղնիքների (սաունաների) համար 200000 (երկու հարյուր հազար ) դրամ,
4) խաղատների կազմակերպման համար 500000 (հինգ հարյուր հազար )դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար 250000 (երկու հարյուր հիսուն հազար )դրամ,
6) վիճակախաղերի կազմակերպման համար 100000 (մեկ հարյուր հազար )դրամ:

7. Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական

տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 (զրո) դրամ:

8. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է 50000 (հիսուն հազար) դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000 (երկու հազար) դրամ,
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,
3) այլ արտաքին գովազդի համար 1000 (մեկ հազար) դրամ,
4) համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների համար 250 (երկու հարյուր հիսուն) դրամմեկ քառակուսի մետրի դիմաց:
5) կազմակերպության կողմից իր գովազդը տեղաբաշխելու և տարածելու համար գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց յուրաքանչյուր ամսվա համար սահմանվում է տեղական տուրք 100 (մեկ հարյուր) դրամ
6) սոցիալական գովազդի համար 0 (զրո) դրամ

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և քաղվածքների կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 (երկու հազար) դրամ:
12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 (մեկ հազար) դրամ
13. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **50000** (հիսուն հազար) դրամ:

14. Տեղական վճարների դրույքաչափերը

1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **5000 (հինգ հազար) դրամ,**

2) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 2000 (երկու հազար) դրամ:
3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար 1000 (մեկ հազար) դրամ)

4) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 դրամ:

5) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

6) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ.

7) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3 դրամ:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (15.12.2017թ.) Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 Էլ հասցե saramej.lori@mta.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2017 թվականի N 27-Ն

## ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

## ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով , << ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով ու Սարամեջ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել Սարամեջ համայնքի 2018 թվականի բյուջեն:

| | | |
|---|---|---|
| Ընդամենը եկամուտներ | – | 39645.3 դրամ |
| Որից՝ վարչական մաս | _ | 39645.3 դրամ |
| ֆոնդային մաս | _ | 2000.0 դրամ |
| Ընդամենը ծախսեր | _ | 39645.3 դրամ |
| Որից՝ վարչական մաս | _ | 39645.3 դրամ |
| Ֆոնդային մաս | _ | 2000.0 դրամ |

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ՝ (6 ) | ԴԵՄ՝ (0) | ՁԵՌՆՊԱՀ՝ (0) |
|---|---|---|---|
| 1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ | | | |
| 2.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ | | | |
| 3.ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ | | | |
| 4.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ | | | |
| 5.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 6.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ .Սարամեջ (15.12.2017թ.) Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 28-Ն

### ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի II կետի ժ) ենթակետով, քանի որ Սարամեջ համայնքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվում է ծրագիր և ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի 100 տնտեսությունից բաղկացած գործող «Սարամեջ համայնքի արտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը համայնքի բնակչության համար ունի կարևոր նշանակություն և հաշվի առնելով համայնքի ղեկավարի և կոոպերատիվի անդամների ներկայացրած առաջարկությունը համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Սարամեջ համայնքի բյուջեի վարչական մասի այլ ընթացիկ դրամաշնորհներ 04.02.04 դասակարգման 4639 հոդվածից 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ, որպես ներդրում հատկացնել «Սարամեջ համայնքի արտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին համայնքում գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ՝ (6) | ԴԵՄ՝ (0) | ՁԵՌՆՊԱՀ՝ (0) |
|---|---|---|---|

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
3.ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
4.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
5.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
6.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (15.12.2017թ.) Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » դեկտեմբերի 2017 թվական, 29- Ա

### ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ (ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 3.1-րդ կետի 3-րդ ենթակետով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Սարամեջ համայնքի եկեղեցապատկան տարածքը անհատույց տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ՝ (6) ԴԵՄ՝ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
3.ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
4.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
5.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
6.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
գ.Սարամեջ (15.12.2017թ.) Կ.Տ